եւ առնուլ գրամ 'ի փոխատուէ, և կամ թողուլ լքանել զվանօրայս եւ ցրուիլ անտի, եթէ թողուցուն պարտատերք եւ իշխանք երկրին · լաւ համարէին զմահ քան զայնպիսի դառնագոյն կեանս · զի եթէ ոչ լինի այցելութիւն Աթոռոյն, 'ի զուր եւ նանիր է ընտրութիւն Պատրիարքի · զի ոչ ոք դտանի այնպէս անմտագոյն, դնել զայնպիսի անուր դժուարակիր 'ի պարանոց իւր · նախ այցելութեամբ թեթեւացուցանել զպարտսն, և ապա ընտրել զոք Պատրիարք 'ի միաբանաց Աթոռոյն (1800 · 'ի 22 Յուլիսի) ։

Եւ յելս տարւոյն մեկնեցաւ Վէզիրն 'ի կողմանց Յոպպէի եւ չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս ։ Բնակիչք երկրին տաղտկացեալէին 'ի բռնութեանց և 'ի զզուանաց Բդեշխի իւրեանց Աղա- Մէրտ կոչեցելոյ, նմին իրի գրեցին գիր սմբաստանութեան զնմանէ առ ճէզար Փաշա, որ նստէր յԱքքէ · եւ զի նա ինքն ճէզար ատելութեամբ էր ընդ Բդեշխին, և սպասէր դիպող առթի բերել զնա 'ի ձեռս և պատուհասել, որոյ վասն առաքեաց զօրս և պաշարեաց զՅոպպէ քաղաք, յորում որջացեալ էր այրն ։ Եւ 'ի ժամանակի աստ պաշարման քաղաքին, անհնարինս սրտմտեալ նորա՝ մատնեաց 'ի հարուածս դանից զտեսուչ վարդապետն Հայոց և զմիաբանս նորա, է՛ռ 'ի նմանէ 300 քսակս դրամոց՝ թող զառաջին առեալսն ։ Եւ 'ի սմին ժամանակի անկեալ էր սով սաստիկ 'ի քաղաքն, 'ի սաստկանալ սովոյն եւ բռնութեան՝ խոյս ետ անտի տեսուչն միաբանօք՝ և մտեալ 'ի նաւ փախեան 'ի վերայ ծովու · զայս լուեալ պարտատերց՝ ետուն զպարտամուրհակս 'ի ձեռս զինուորաց, եւ նոցա եկեալ յԵրուսաղէմ պահանջէին 'ի միաբանաց զդրամս տոկոսօք, և այսպիսի դառն վշտաց և նեղութեանց ժամանակին՝ վանքն Ս · Յակոբայ սկսաւ անկանիլ ընդ պարտեօք ։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս Յակոբ Եպիսկոպոս փոխանորդն՝ խորհուրդ 'ի մէջ առեալ ընդ գլխաւորս ազգին, ետ ընտրել նոցա Պատրիարք Աթոռոյն զդարպասընկալ Թէոդորոս Եպիսկոպոս Վանեցի, բայց Թէոդորոս ինքնին հրաժարեցաւ 'ի ծանր պաշտօնէ անտի, հայեցեալ 'ի չքաւորութիւն Աթոռոյն և 'ի դառնութիւն ժամանակին,